

Ա Է Ե Տ Ա Ր Է Բ




«ԹՈՂ ՏՈՒՆԻ Բ ՄԱՆԵՐ ՅՂԱՅԸ ՈՐ ԲՆԾԻ ԳԱՆ» : ԶՈՒԿ. ԺԸ. 16:

Հ Ա Տ Ո Ր Գ .

ԿՈՍՏԱՆՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՈՒՄ 1. 1875.

Թիի 4



նեղէ և սորվելէ կը ձանձրանան, վասն զի անոնց այնպէս ընել հրամայուած է, ոչ թէ վասն զի իրենք կ'ուզեն սորվիլ: Բայց անոնց բրածն ուրիշ բան չէ բայց եթէ պատրաստութիւն մը: Կամաց կամաց պիտի դայ հնձելու ժամանակը, և անասն պիտի վարձատրուին այն աշխատութեան համար որ զանոնք այնչափ կը յողնեցնէ: Պատրաստութիւնը ոչ սակաւ կարևոր է աղոց քան երկրագործին: Եթէ աղայը համբերութեամբ չեն սորվիր, անոնց միտքերն ըստ արժանւոյն չեն պատրաստուիր ցանելու և հնձելու ժամանակին որ ետքը պիտի դանոնց կենացը մէջ, և անոնց քաղած հունձը պիտի ըլլայ աղքատ և նուազ, ինչպէս որ աղքատ և նուազ կ'ըլլայ երկրի մը բերքը, եթէ մշակը չուզեր օրերով յողնիլ և հերկել արտը ծայրէ ի ծայր դարնան ատենը, որ տարւոյն եղանակն է ուր այս պատրաստութիւնը կ'ըլլայ:


Հողագործին համբերութեամբ դեռ տինը հերկելուն նայելով ուրիշ օգտակար դատ մ'ալ կրնանք տունել, որ է յարգութեամբ: Գետինը թերևս կարծր է, կամ թէ արևը շատ տաք է, բայց հերկողը չի կրնար երթալ նստիլ ծառի մը շուքին տակ, այլ պարտի վարել իր եղերը, և արօրին գլուխը կենալով դործին ուշադրութիւն ընել: Գրիտաստ ատենօք իր աշակերտներուն ըսաւ: «Ոչ մէկը որ ձեռքը մաճին վրայ կը դնէ ու ետին կը նայի, Աստուծոյ թաղաորութեանը յարմար է:» Այս խօսքը մեր ամենուս համար է: Ամէնքս ալ պարտինք յարատեւել աստուածահաճոյ կեանք սնցունելու գործին մէջ որուն ձեռնարկած ենք. քանզի վայ անոց որ այսպիսի կեանք մը վարելու որո-

ԱՐՏԵՐՈՒՆ ՏՈՒԱԾ ԳԱՍԸ

Հողագործն իր եղերը ծանր ծանր կը քշէ արտին մէջ, և երբ կը հասնի արտին ծայրը, զանոնք ետ դարձընելով, դրեթէ նոյն տեղւոյն վրայէն կու գայ նորէն արտին միւս ծայրը. յետոյ դարձեալ կը դառնայ նոյն կերպով, և այսպէս խիստ քովէ քով ահոսներ կը բանայ կակուղ հողին մէջ,

և այս աշխատութեան համար ժամեր և օրեր կը վատնէ: Այս երկար աշխատութիւնն ինչո՞ւ համար է, Գետինը պարտադէտ համար միշտ է, որպէս զի ետքը ցանէ կամ անկէ: Գարնան ատենն արտերուն մէջ եղած այս տաժանելի գործին մեզի տուած առաջին դասն է՝ համբերութեամբ: Տղայք իրենց դասը ստէպ ստէպ կրկ-

շած է, և համբերութեամբ չի տանիր այն կեանքին նեղութիւններուն, ոչ ալ կ'ուզէ համբերութեամբ կրօնի գծաւարութեանց դէմ, այլ ետին գտնուելով կը նայի մեղաւից հեշտութեանց որոնց անդամ մը դարձուց իր կռնակը: Այսպիսի մարդ մը մաս չունի այն վարձատրութեանց զոր Քրիստոս պիտի տայ իր հաւատարիմ ծառաներուն:



Երկրորդ պատկերը բերնակ կոչուած թռչող մը բոյն է, որ իրարու կարուած տերեւներով կը շինուի: Այս բոյնը շինելու համար թռչունն իրրե ասեղ կը գործածէ իր

կտուցը, խոտերն ալ իրրե գերձան, Բոյնը կակուղ բրդով լեցուելով կ'ըլլայ աղէկ տուն մը թռչողն ձագերուն. և որովհետեւ բոյնը ծառին բարակ ճիւղերէն կախուած է, անոր չեն կընար հասնիլ կապիկները և օձերը որ շատ են անտառներու մէջ, Այս թռչունը շատ գեղեցիկ է, քանզի անոր փետուրներն են ծիրանի, կանաչ և սպիտակ:

Միւս պատկերը կը ցույնէ ձեզի բողբոջին տարբեր տեսակ մը բոյն: Գուր գծաւարու կը տեսնէք զայն, քանզի կը թռչի թէ թռչողն մէկ մասն է. բայց եթէ սուր աչքով նայիք պատ-




Ա. Զ. Ե. Բ. Ե. Բ ՏՈՒՆԵՐ

Գեղերու մէջ ապրող տղայք շատ անգամ պատահութիւն ունեցած են տեսնելու այսպիսի տուններ, ինչպէս են այն զարմանալի տուններն ուր թռչունք կը բնակին, կամ այն նորանշան թռչութեայ տունները որ պիծակներու բնակարան են, և կամ մեղուներուն բնակած մամաչէն տունները որ մեզի այնչափ օգտակար են:

Մենք այս ամիս ձեզի համար քանի մը նկար շինել տուինք որ պատկեր են այսպիսի նորանշան տուններու, ուր թռչունք կը բնակին. ուրիշ անգամ պիտի գնենք մեղուներու և անոնց տուններուն պատկերները:

Երեք բոյններուն, որ այս անգամ հոս կը տեսնէք, առաջինը կը վերարբերի սորոքակ կոչուած թռչող մը որ Հնդկաստանի մէջ կ'ապրի: Այս թռչունը խոտերէ պարկ մը կը հիւսէ, և զայն արմաւենեայ տերեւի մը ծայրէն բերանն ի վար կը կախէ: Այս պարկածն բունին վերի կողման բողբոջակ միջոցին մէջ կ'ածէ թռչունն իր ձուերը, և անոր թնամիներէն և ոչ մին կընայ հասնիլ հոն, քանզի արմաւենեայ տերեւն այնպէս բարակ է որ չի կընար սողուն մը վերցնել. բոյնին բերանն ալ այնպէս նեղ է որ թեւաւոր թնամի մը չի կընար անոր մէջ մտնել: Այս տեսակ բոյնը շինող թռչուններէն քանի մը հատ, բոյներէն ալ հատ մը, կան իւսկիւտարու գայրոցը:



կերին, պիտի տեսնէք որ թռչունը նստած է գաւաթի նման բանի մը վրայ որ ժայռին վրայ հաստատուած է: Այն գաւաթի նման բանը բոյնն է, և թռչունը կը շինէ զայն տեսակ մը տունիէ կամ ձկան ձուերէ: Թռչունը ծիծառի տեսակ է, բոյնն ալ կը թռչի շատ ուղիտակ և ազնիւ սորոքակ շինուած: Չինացիք այս բոյնը կ'ուտեն, և անոր աղէկ տեսակներն իրենց ծանրութեանը չափ արծաթ կ'արժեն:

Այս անձեռագործ տանց թէ գրքուած տեղերուն, թէ նիւթերուն որոնցմէ շինուած են, և թէ զանոնք շինող թռչողն ճարտարութեանը որչափ նայինք, այնչափ աւելի պիտի զգանք Աստուծոյ կարողութիւնը որ

այս փոքրիկ թռչողն տուաւ իմաստութիւն իրենց կենացը համար հարկաւոր եղած միջոցներն հայթայթելու:

Տղայոց Աւետարանի համար

Դրան Յ. Ե.

Մ. Ե. Բ. Ե. Բ Ե. Բ ԳՈՂ ՄԻՄՈՆԻՆ ՊԱՄՄՈՒԹԻՒՆԸ

Սիմոն հնազանդ չէր իր ծնողացը, որ միշտ կը խրատէին զանի չար տղայոց հետ ընկերութիւն չընել: Սիմոն իր բարեպաշտ ծնողաց այս օգտակար խրատը մտիկ չընելուն համար ստէպ կը պատժուէր: Օր մը Սիմոնին չար ընկերները հրաւիրեցին զանի կեռաս գողնալու, և Սիմոն ընդունեց անոնց հրաւերը: Ամէնքը մէկտեղ պարտեղին մօտ անտառ մը երթալով որոնցին սպասել հոն մինչև իրիկուն, և մթննալէն ետքը պարտեղը մտնել կեռաս գողնալու: Կը խորհէին թէ մութը կ'իւրեւնէ ետքը պարտեղի զանն իր տունը կ'երթայ, և անտան իրենք համարձակ և աներկիւղ կընան յառաջ տանիլ իրենց չար խորհուրդը: Արդարև քիչ մը ետքը բաւական մթնցաւ, և աղայք անտառէն դուրս ելլելով պարտեղը գացին: Այն օրը տխուր օգ մը կար, և երկինք սև ամպերով ծածկուած էր: Տղայք կարծեցին թէ իրիկուն եղաւ, բայց դեռ կանուխ էր: Մինչ անոնք ծառերուն վրայ ելան և ուրախութեան ազդակներով կեռասները կը բազէին (ու կ'ուտէին, պարտեղի զանը որ պարտեղին մէկ անիկունը զբաղած էր իր գործին, աղմուկը լսելով վաղեցեկաւ, և գող տղայ մէկը բռնելով սկսաւ ծեծել: Միւսները սարսափելով ծառերէն վար ցատկեցին և սկսան փախչիլ: Սիմոն ալ այս փախչողներուն մէկն էր:

Այն միջոցին փոթորիկը սկսաւ. կ'որոտար, կը փայլատակէր, շանթեր կ'արձակուէին, և անձրեւ հեղեղի պէս կը տեղալ, կարծես թէ Աստուած այս չարամիտ տղայք պատժելու համար հայնց այն մըրիկը: Տղայ մէջէն անվերջորէն մէկմէկ կողմ ցրուելով աներևոյթ եղան. Սիմոն որ փախկասուն և անվարժ էր, որոտումներէն և փայլակներէն վախնալով, անձրեւէն ալ թրջած ըլլալով անտառը կը մտնէ, և բարձր կաղ-

2.
3.

նոյ ծառի մը տակ կը կծկի: Թերևս կը խորհէր պատեւ հոն մինչև փոթորիկն անցնելը. խեղճ տղան չէր գիտէր որ ապաւինած տեղը վտանգաւոր էր: Արդարեւ շատ չանցաւ, կայծակ մը զարկաւ այն ծառին ուրուն տակը Սիմոն կը կենար, և Սիմոն ի քթթել ական ածխոյ պէս սեցած ինկաւ մնաց հոն:

Չար ճամբու մէջ քարոզներուն վախճանը կորուստ է:

ԿԱՐԱՊԵՏ ԱՔԱՆԱՍԵԱՆ

Տղայոց Աւետարեթի համար.

«ԵՐԿՆԻՅ ԹԱՂԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԱՏԱՆԿՆԵՐՈՒՆ Է»

Երբեմն կը կարծուի թէ Քրիստոսի հաւատալը չափահաս մարդոց միայն յատուկ է. բայց այս կարծիքը սխալ է: Ես հոս քանի մը օրինակով պիտի ցուցնեմ թէ փոքր տղայք ալ կրնան Քրիստոնեայ ըլլալ. և այն օրինակները որ պիտի յիշեմ՝ ոչ թէ կեղծ բաներ են, այլ իրօք պատահած են, ես ականադես եմ անոնց:

Իբր չորս տարեկան տղայ մը հիւանդացաւ և մեռնելու մօտ էր: Դրացիներէն բարեպաշտ կին մը այցելութեան գալով, սկսաւ անոր հետ խօսիլ: Տղան անոր ըսաւ. «Ինծի երգ մը ըսէ՛» Տիկինը հարցուց, «Ո՞ր երգը» Տղան պատասխանեց, «Երգ մը կայ՝ Հոն ցաւ կամ վիշտ չկայ՝ խօսքերով, կ'ուզեմ որ զայն երգես» Տիկինը յիշեալ երգին առաջին տունը երգեց:

- «Սիրելիներս, եկէք,
- Երբ մեռնելու մօտ եմ.
- Երկնից վրայով ինձ երգեցէք,
- Երգով թող վեր ելլեմ:
- Հոն ցաւ կամ վիշտ չկայ,
- Հոն ցաւ կամ վիշտ չկայ,
- Երկինքըն վեր՝ ամէն է սէր,
- Ալ ցաւ կամ վիշտ չկայ»:

Տիկինը երգին երկրորդ տունը չյիշելով, երբ միեւնոյն տունը պիտի կրկնէր, տղուն նայելով զանի մեռած տեսաւ:

Այս տղան միթէ չղբաց Յիսուսի ներկայութիւնը: «Երկնից թագաւորութիւնը ասանկնեցունն է»:

ԴՈՒՔ ՈՐ ԿՈՂՄԷՆ ԷՔ

Աշխարհիս վրայ մարդիկ երկու դաս երկու հակառակ կուտակցութիւն, բաժնուած են: Մէկ դասուն մարդիկը Աստուծոյ կը հաւատան մտքով, գիտութեամբ. միւս դասուն մարդիկը կը հաւատան ոչ մտքով միայն, այլ և սրտով և փորձառութեամբ:

Առաջինները կը հաւատան Աստուծոյ, բայց անոր հնազանդիլ չեն ուզեր: Այսինքն՝ կը յիշեն զԱստուած և անոր օրէնքը, երբ մեղք գործելու կ'ըլլան, բայց իրենց սրտին մէջ մեղքը սիրելով, Փարաւոնին պէս կ'ըսեն. «Եհովան սով է որ անոր խօսքը մտիկ ընեմ», և կամ գեւերուն պէս որոնց համար Աւետարանին մէջ կը կարգանք թէ Յիսուսի կ'ըսէին, «Իսկ մեր հետքը ինչ բան ունիս» երբ անոնց խիղճը կ'ազդէ անոնց որ մեղքէն ետ կենան: Այսպիսիները թէ և կը հաւատան Աստուծոյ, ապստամբ և անհաւան են, մինչև որ իրենց մեղացը համար պիտի պատժուին, և ան աստե՛ն կը գողան անիւ: Տղայք անգամ երբեմն այս դասուն կը վերաբերին, թէ և չգործածեն Փարաւոնին խօսքերը: Անոնք այս դասուն կը վերաբերին, երբ գիտնալով թէ այս ինչ բանը չար է՝ կ'ըսեն, «մինչ անոնց խիղճը բարձրաձայն կ'աղաղակէ ամէն մէկուն թէ «Մի ընե՛ր այդ բանը»:

Երկրորդ դասուն մարդիկը կրնան նոյն հարցումն ընել զոր Փարաւոն ըրաւ. «Եհովան սով է», բայց ասոնք աւելի բան մը կ'ըսեն, «Ո՞վ է Տէրը, որ մենք անոր հաւատանք» Ասոնք կը փափաքին Աստուծոյ վրայ աւելի բան գիտնալ, անոնց սիրտերը տաք են սիրով առ Աստուած, և պատրաստ են իսկ և իսկ հնազանդիլ անոր, երբ կը գիտնան թէ ինչ է անոր կամքը: Կը զգան թէ Աստուծոյ կամքը գիտնալը և զՔրիստոս իրօք ճանչնալը յաւիտենական կեանք է, ուստի և կ'ըսեն, «Երանի՛ մեզի որ կը ճանչնանք զանի և անոր յարութեան զօրութիւնը» Այս դասուն ալ երբեմն տղայք կը վերաբերին: Այսպիսի են այն տղայք որ իրենց կենացը մէջ կ'ապրին կիրաւիօրեայ գպրոցաց մէջ իրենց սովորածներուն համեմատ, այն տղայք որ անկեղծաբար կը ջանան բարի ըլլալ և ուրիշներուն բարիքը ընել: Երկնից թագաւորութիւնն արդարեւ այսպիսի տղոց է: Ամէն տղայ

ասիկա կրնայ սորվիլ և ընել, եթէ «Տէրը ճանչնալու ետե՛ք ըլլայ»:

Տղայք, դուք որ այս թերթը կը կարդաք՝ ո՞ր դասուն կը վերաբերիք, ո՞ր կողմէն էք:

ՓՈՒՐԻԿ ԱՏԱՀԱԿԸ



Ի՞նչ ստահակ տղայ: Տես, ճերմակ պատին վրայ ածխով գիր կը գրէ:

Ո՛չ, ստահակ չէ: Ստահակ տղան գիտամբ փրաս կ'ընէ. բայց փոքրիկ Պօղոսը փրաս ընելու դիտաւորութիւն չունի:

Պօղոս բաներ կը կտորտէ, անոնք գլխիվայր կը դարձնէ, բաներ կը կորսնցնէ, ինք իրեն փրաս կ'ընէ, և կը խնդայ, կը պոռայ, կ'երգէ, ստուրները գետինը կը զարնէ, բայց ասոնք ստահակութիւն չեն: Ասոնք միջոցներ են որով տղայ մը աշխարհիս վրայ իր ընթացքը կ'ընէ, և իր բոլոր տիքը գանուած բաները գործածել կը սորվի: Բոլոր այս բաները միանգամայն չի կրնար սորվիլ: Ասոնք սորվելու համար ժամանակ և փորձառութիւն պէտք է: Արդարեւ մեր պարտքն է տղուն խմայնել. բայց պէտք է որ ինք դպչի, անձամբ զգայ, և անոր միտքը սորվի խորհիլ և խորհրդածել իրաց վրայ: Այսպէս տղան ամէն օր մէյմէկ քիչ բան կը սորվի, և օգտակար մարդ մը ըլլալու կը պատրաստուի:

Պէտք է երկայնամիտ ըլլալ փոքր տղոց, Յանգիմանելու չէ զանոնք, երբ սխալ մը կ'ընեն: Փոքրիկ տղայք մենէ սէր, քաղցրութիւն և ճշմարտութիւն սորվելու են: Անոնք չուտով կը սորվին ինչ որ մենէ կը տեսնեն:

Այս տարուան տղայոց Աւետարեթին 2 թուոյն մէջ, «Պատիկ բայց մեծ մուլութիւն մը» վերնագրով յօդուածը գրողին անունը սխալմամբ «Եղաճեան» ըսուած է, որ «Եղաճեան» պիտի ըլլայ:

Մարտի Աւետարեթին մէջ նկարով կարդալու խօսքերը կը գտնուին Առակ. ԺԷ. 14: Առակ. ԻԶ. Գ: Առակ. ԻԶ. 18, 19: Առակ. ԻԷ. 8:

ՅԻՍՈՒՍ ՁԻՍ ԿԸ ՍԻՐԷ

Ո՛րչափ ուրախ եմ որ Բարձրեան Աստուած Հայրական սէրը մեզի է յայտնած.
Այս անոյշ բանը Սուրբ գիրքը կ'ըսէ, Ձիս մեղաւորը Յիսուս կը սիրէ.

Ձիս մեղաւորս Յիսուս կը սիրէ, Ձիս կը սիրէ, զիս կը սիրէ,
Ձիս մեղաւորս Յիսուս կը սիրէ, Այս, զիս ալ, զիս ալ.

2. Թէեւ մարտ մէկ ոչխար մը ըլլամ,
Եւ իմ Հովիւըս շատ հեղ ալ մոռնամ,
Երբոր դառնամ՝ զիս սիրով կը գրկէ,
Ձիս մեղաւորը Յիսուս կը սիրէ.
Ձիս մեղաւորս Յիսուս կը սիրէ, եւն.
5. Այս, կայ երգ մը որ պիտի երգեմ,
Երբ Թաղաւորըս փառքովը տեսնեմ.
Հոն ալ բերանըս միշտ պիտի կրկնէ,
Ձիս մեղաւորըս Յիսուս կը սիրէ.
Ձիս մեղաւորս, եւն.
4. Ես պարտական եմ զայն շատ սիրելու,
Քանզի եկաւ իմ հոգիս փնտռելու.
Սէրն է որ զինք մեռնելու ըստիպեց.

- Ո՛հ իմ Փրկիչըս զիս ո՛րչափ սիրեց,
Ձիս մեղաւորս, եւն.
5. Կը հարցունեմ թէ «Դուն ինչպէս գիտես»,
Փանք Յիսուսի, շատ աղէկ գիտեմ ես,
Ձի ներսի զիս Սուրբ հոգին զայս կ'ըսէ,
«Տէրբո՛ւ Յիսուս հիմա քեզ կը սիրէ.»
Ձիս մեղաւորս, եւն.
6. Այս գիտնալով իմ հոգիս կը հանգչի,
Եւ իմ Փրկիչըս շատ քաղցր է ինձի.
Շուտ կը փախչի սատանան ալ ինձմէ,
Ձի Յիսուսին զիս սիրելը գիտէ.
Ձիս մեղաւորս, եւն.



ՁԱՐ ՈՂԻՆ

Կարապետ և Եղիսաբեթ երկու քրոջ զաւակներ էին, և հասակակից ըլլալով սովոր էին մեկտեղ խաղալ, բայց երբեմն կուէր կ'ընէին: Այսպիսի ժամանակներ կարծես թէ չար ոգի

մը կը տիրէր անոնց: Մինչդեռ տղայ էին անոնք, անոնց մայրերն ուրիշ բան չէին տեսներ անոնց փոքրիկ զուարթ դէմքերուն վրայ, բայց եթէ բարի հոգի մը: Բայց երբ այնչափ մեծցան որ կրնային նստիլ, սկսան երբեմն խոժոռագէժ ըլլալ, և երբ իրարու ձեռքէ խաղալիկ մը յափշտակել կը ջանային, և կը բարկանային իրարու, անատեն կարծես թէ չար ոգին կը նայէր անոնց աչքին մէջէն:

Օր մը անոնց մայրերը արամուծեամբ ըսին իրարու. «Ի՛նչ պիտի ընենք, եթէ չար ոգին իր բնակութիւնը հաստատէ այս տղոց սրտերուն մէջ:» Եւրբ յիշեցին որ ամառը քանի մը պիծակ գալով բոյն մը չենեցին պատու հանին տակ, ճիշդ այն տղոց օրուած տեղին քով, իրենք ալ

պիծակներուն բոյնն աւրելով զանոնք վռնտեցին: «Ձար ոգւոյն ալ ճիշդ այսպէս ընելու ենք.» ըսին երկու մայրերն իրարու. «Դուրս վռնտելու ենք զանի, դուրս վռնտելու ենք քանի որ դեռ հաստատուած չէ:» Եւ գիտնալով որ չար ոգին ուրիշ բանով չէին կրնար վռնտել բայց եթէ աղօթելով որ Սուրբ հոգին դար և սիրով լեցունէր այն տղայոց սրտերը, սկսան հսկել և աղօթել անոնց համար: Ատեն ատեն կը թուէր թէ չար ոգին բոլորովին գացած էր անոնցմէ, բայց շատ անգամ նորէն կը դառնար:

Օր մը Կարապետ Եղիսաբեթին քով գալով տեսաւ որ անիկա գաւազան մը ձի ըրած և վրան հեծած էր: Գաւազանին ծայրը փայտէն փորուած գլուխ մը կար, ձիու գլխու նման: Կարապետ այս գաւազանը տեսնելուն պէս, չար ոգին եկաւ անոր: Կարապետ վազեց փայտէ ձին Եղիսաբեթին ձեռքէն յափշտակելու: Նոյն չար ոգին Եղիսաբեթին աչքին մէջէն ալ կը նայէր ծուռ ծուռ, և Եղիսաբեթ վերցնելով ձեռքին մտրակը քանի մը անգամ զարկաւ Կարապետին, որ ցաւէն սկսաւ պոսալ: Բայց աւանդ, որչափ արամեցան անոնց մայրերը տեսնելով այս տեսարանը, և ինչպէս աւելցուցին իրենց աղօթքը որ Աստուած իր սիրոյ Հոգին թափէր անոնց սրտերուն մէջ չար ոգին անկէ հալածելու համար: Նաև Կարապետին և Եղիսաբեթին հետ այնչափ խօսեցան անոնց անարժան ընթացքին վրայ, որ վերջապէս այս տղայք սկսան ամբողջաբար իրենց ըրածին համար:

Այս ճամբով մեծցան այս երկու տղայք, և հասկցան որ, մարդ ըլլալով, երբ անհոգ կ'ըլլան, չար ոգին գալով իրենց սրտերուն մէջ կը հալածէ բարի ոգին: Բայց ես կը կարծեմ թէ անոնց մայրերուն աղօթքին համար է որ բարի ոգին միշտ կու գար և կ'օգնէր անոնց, և անոնք կը ջանային չար ոգին հալածել: Կարապետ և Եղիսաբեթ մէյմէկ պատկեր ունին որուն կը նային երբեմն, երբ իրենց մայրերուն աղօթքը կը յիշեն, և այն պատկերն ահա հաս կը տեսնէք: Ասիկա անոնց կը ցուցնէ նաև թէ ո՛րչափ դէժ է չար ոգին:

Ամերիկայի միսիոնարաց ընկերութեան կողմէն
Խմբագիր Ժ. Բ. Կրին

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԲՄԵՆ
Չագմագճըլար, Յակոբեան խան, Թիւ. 12.